**Արձանագրություն N 7**
**ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի մրցույթի փուլի գնահատող հանձնաժողովի նիստի**
**/ՀՀ կառավարության՝ ի դեմս Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության միջև 21.11.2016թ. կնքված վարձակալության պայմանագրի անկախ տեխնիկական աուդիտորական ծառայության ձեռքբերման /**

**Երկիր**

Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 27 ապրիլի 2026թ.

**Ընթացակարգ**
Անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման բաց մրցույթի փուլ:
**Ծրագիրն իրականցնող մարմնի անվանումը**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:
**Ծրագրի անվանումը**
Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված ««Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի» շրջանակներում «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերության 2022-2031թ.թ անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերում:
**Նիստին մասնակցում էին՝**
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Քանքանյանը,
Հանձնաժողովի անդամներ Ա. Մարգարյանը, Ա. Սիմոնյանը, Ս. Ասրյանը, Ս. Ալեքսանյանը, Ա. Առուշանյանը, Ս. Ալեքսանյանը, Մ. Բաբայանը և Ա. Սերգոյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Մրցույթի փուլի հրավերի փոփոխության վերբերյալ

---

**Օրակարգ**
ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի մրցույթի փուլի հրավերում փոփոխություն կատարելու մասին:
**Քննարկում**
ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ծածկագրով գնման ընթացակարգի մրցույթի հրավերի հայտարարության վերաբերյալ նախաորակավորված մասնակիցների կողմից ներկայացված առաջարկի հիմքով՝ հայտերի ներկայացման ժամկետի երկարաձգման վերաբերյալ:
Քննարկվեց ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի մրցույթի նախաորակավորված մասնակիցների հարցադրումները՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետի փոփոխության վերաբերյալ և հանձնաժողովի առաջարկը՝ հրավերով հայտերի ներկայացման ժամկետի երկարաձգումը երկու շաբաթով, այն է սահմանել 01.06.2026թ.:
**Հանձնաժողովի որոշումը**
1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ կետը. «Բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» և «ե» ենթակետերում նշված պատվիրատուների, թղթային եղանակով իրականացվող գնումների դեպքում հայտերի ներկայացման ժամկետը **առնվազն քառասուն** օրացուցային օր է» և հաշվի առնելով, որ ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի

նախարրակավորված մասնակիցների հարցադրումները քննարկման արդյունքներով որոշվեց փոփոխել ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի մրցույթի փուլի հայտը ներկայացնելու վերջնաժամկետը:

Միաժամանակ Հրավերի Դիմում-հայտարարություն Հավելված 1-ի մեջ նշված <<հավելված 1.4>> բառերը փոխարինվել է <<հավելված 1.5-ի>> բառերով:

2. Նախարրակավորված մասնակիցներին էլեկտրոնային ձևով տրամադրել փոփոխված հրավերը:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և.վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 01.06.2026թ. ժամը 16:00–ին, (ըստ անհրաժեշտության կարող է հրավիրվել լրացուցիչ նիստ), որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-8, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

| | |
|---|---|
| Նախագահ | Տ. Քանքանյան |
| անդամներ | Ա. Մարգարյան |
| | Ա. Սիմոնյան |
| | Ս. Ասրյան |
| | Ա. Առուշանյան |
| | Ս. Ալեքսանյան |
| | Մ. Բաբայան |
| | Ա. Սերգոյան |
| Քարտուղար | Ա. Սարգսյան |